ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5782-Ա « 25 » նոյեմբերի 2026թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ի.463-Ն, Երևանի քաղաքապետի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի ի.3757-Ա և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի ի.1667-Ն որոշումները, Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի հրապարակային սակարկություններով կազմակերպման և անցկացման հանձնաժողովի կողմից 16.11.2026թ. արձանագրություններով տրված առաջարկությունները.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող տարածքները ներկայացնել աճուրդային կարգով օտարման՝ համաձայն սույն որոշման ի.1 հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների:

2. Երևան համայնքի սեփականություն համարվող տարածքները ներկայացնել վարձակալության իրավունքով տրամադրման աճուրդի՝ համաձայն սույն որոշման ի.2 հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչությանը՝ ներկայացված գույքերի մասին տեղեկատվությունը տարածել մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

4. Հանձնարարել Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման աճուրդը և մրցույթը կազմակերպող ու անցկացնող հանձնաժողովին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված աճուրդով վարձակալությամբ տրամադրման ենթակա գույքերի վերաբերյալ հրապարակային ծանուցման հրապարակումը և սահմանված կարգով ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ



Հավելված հ.1
Երևանի քաղաքապետի
25.11. 2026թ.
հ. 5782–Ա որոշման

ՑԱՆԿ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ

Հ/հ	վարչական շրջանը	հասցեն	շինության նշանակությունը և տեսակը՝ ըստ վկայականի	շենք (շինության) մակերեսը /քմ/	հողամասի մակերեսը	մեկնարկային գինը /ՀՀ դրամ/
1	Կենտրոն	Չարենցի փողոցի հ.9	ոչ բնակելի տարածք	70.2	--	30.822.000
2	Արաբկիր	Կիևյան փող. հ.14 շենքի հ.24	նկուղային տարածք	79.9	473.0 քմ /80/1277 ընդ. բաժնային սեփակա-նություն/	31.785.000
3	Կենտրոն	Ե.Քոչար փող. 21	ոչ բնակելի տարածք	115.3	---	63.260.000
4	Աջափնյակ	Լենինգրադյան փողոց 16/6	հասարակական շինություն	68.77	90 քմ	12.909.000
5	Էրեբունի	Նոր Արեշ 1/25	տարածք	165.7	195.5քմ	21.010.000
6	Նոր Նորք	Ա.Միկոյան փողոց 15/2	շինություն	279.51	308.75քմ	43.805.000
7	Շենգավիթ	Շիրակի փողոցի 6/10	հասարակական շինություն	207.98	309.5քմ	32.682.000

8	Շենգավիթ	Շահվերդյան փողոցի հ.18	տարածք	236.6քմ	254	20.843.000

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված հ.2
Երևանի քաղաքապետի
25.11. 2026թ.
հ. 5782-Ա որոշման

ՑԱՆԿ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ

Հ/հ	վարչական շրջանը	հասցեն	շինության նշանակությունը և տեսակը՝ ըստ վկայականի	շենքի (շինության) մակերեսը /քմ/	մեկնարկային գինը 1 ամսվա համար /ՀՀ դրամ/	վարձակալության ժամկետը և օգտագործման նպատակը
1	Կենտրոն	Փ.Բուզանդի փողոցի հ.1/3	վարչական շենք /նկուղ/	102.9քմ	439.000	3 տարի՝ որպես գրասենյակ
2	Կենտրոն	Փ.Բուզանդի փողոցի հ.1/3	վարչական շենք /1-ին հարկ/	319.1քմ	2.019.000	5 տարի՝ որպես գրասենյակ
3	Կենտրոն	Փ.Բուզանդի փողոցի հ.1/3	վարչական շենք /1-ին հարկ/	90.21քմ	497.000	3 տարի՝ որպես գրասենյակ
4	Կենտրոն	Փ.Բուզանդի փողոցի հ.1/3	վարչական շենք /1-ին հարկ/	127.22քմ	701.000	3 տարի՝ որպես գրասենյակ

5	Կենտրոն	Փ.Բուզանդի փողոցի հ.1/3	վարչական շենք /1-ին հարկ/	18.89քմ	115.000	3 տարի՝ որպես գրասենյակ
6	Նոր Նորք	Գայի պողոտա հ.19	վարչական շենք	14.6քմ	71.000	2 տարի՝ որպես գրասենյակ
7	Ավան	Ավան-Առինջ թաղամաս 1-ին միկրոշրջան, 3/14	գրասենյակ /2-րդ հարկ/	81.0քմ	123.000	2 տարի՝ որպես գրասենյակ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**